ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 նոյեմբերի 2020թ. թիվ 933-Ա

Լ.ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 158, 160, 164 հոդվածների, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. օգոստոսի 11-ի թիվ 1599-Ն որոշմամբ, հաշվի առնելով Լ.Սարգսյանի դիմումը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. «ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Ա.Բակունցի անվան N 7 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Լուսիկ Սարգսյանին տրամադրել 2020 թվականի աշխատանքային տարվա ամենամյա երկարացված արձակուրդը ս/թ նոյեմբերի 16-ից մինչև դեկտեմբերի 19-ը ներառյալ՝ 30 աշխատանքային օր:

2. Լ.Սարգսյանի արձակուրդում գտնվելու ժամանակ «ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Ա.Բակունցի անվան N 7 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունների կատարումը դնել «ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Ա.Բակունցի անվան N 7 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի փոխտնօրեն Նարինե Մեհրաբյանի վրա:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

11/14/2020

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2020թ. նոյեմբերի 13
ք.Վանաձոր